

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻՍ

Տարեկան . . 12 Ձր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Իրկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . 14 Ձր.


Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 "

Կ Ա Ն Խ Ի Կ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ծանոցման տողը
20 սանդիս

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՌՈՒԹԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒՐԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրոշքիւնք եւս
չեն տրոշիր

ՄԱԿԵՂՈՆԻԱ

ԵՒ ԵՒՐՈՊԱ

Կ. Պոլսոյ հեռագիրները ցոյց կուտան թէ Դրան անհանգրսուտութիւնը կաճի Մակեդոնիոյ կացութեան նկատմամբ: Կը սկըսին հասկնալ թէ պաշտօնական լաւատեսութեան եղանակը չէ, և թէ բաւական չէ աչք գոցել մեղսակցելու համար կացութեան մը տագնապներուն որ օրքան զօր աւելի սպառնալից հանգամանք մը կըստանայ: Կերեւայ թէ եւրոպական դիւանագիտութիւնը ունեցած է իր կարգին մի քիչ գիտակցութիւն իրաց վիճակին ծանրութեան նկատմամբ, որուն պատասխանատուութենէն ինքն ալ չպիտի կրնայ ազատիլ, իրաւսիւս և Աւստրիոյ դեսպանները Սուլթանի ուշադրութիւնը հրաւիրեցին այս կացութեան վրայ, և նա խոստացաւ մասնախումբ մը կազմել մեծ վէճեր Սախտէն և Աճմէտ թէ՛ ֆիզիք ու ջիւհատի փաշա նախարարներէն:

Մակեդոնիայէ մեզ հասնող բոլոր վաւերական լուրերը միօրինակ փոքն կը նկարագրեն այս նահանգը իբր անապահովութեան մատնուած և ենթարկուած վարչական զեղծումներու պատճառաւ դժբախտութեան և խուճերու անկարգութեան փորձերուն, որոնք կերեւայ թէ պիտի դիմագրեն մինչեւ որ անիշխանութեան մատնուի երկիրը:

Սէլանիկի նահանգին մէջ յիշատականաց թիւը—պաշտօնապէս զանոնք աւազակ կը կոչեն—որոնք երկիրը կը պտտին, չէ դադարած աճելէ հակառակ կառավարութեան բոլոր ջանքերուն: Վալին, իր անկարողութենէն կատաղած, գերազանցապէս ձախող կերպ մը ընտրեց, բնակիչներուն տուները զինուորներ զետեղելով, որպէս զի ապրտամբները հասկնայ ու ձեռք անցնէ:

Նոյն իսկ Սէլանիկի մէջ բանտերը մինչեւ բերանը լեցուն են բանտարկեալներով: Հոն 300 է աւելի կը տառապին թշուառութեամբ: Եւրոպացի գործակալ մը

որուն վկայութիւնը այնչափ աւելի արժէք ունի ցորչափ կը ներկայացնէ պետութիւն մը որուն դէպի թուրքիա ռոտ կամեցողութիւնը նուազ կասկածելի է, Գերմանիոյ դեր—հիպատոսը, շատ յուզուած ետ դարձաւ այցելութեանէ մը որուն համար արտօնուած էր եկեղեցականի մը հետ:

Չըթուրի թէ այս վարմունքը, որ դեռ խմբովին սպանութիւններ և փոքր Ասիոյ մէջ առանց դատաւճռի մշտնջենական աքսորանք չէ, արդարանալի ըլլայ ժողովուրդի մը համար որուն յուսահատութիւնը կը մղէ քաջարարութեան: Սթրուսիցայի մէջ արիւնհեղ ընդհարում մը տեղի ունեցաւ 250 մարդէ բաղկացեալ լեղափոխական խումբի մը կամ գովիքաւոր և քիչ նուազ բազմութիւ պաշտօնողութեան վաշտի մը միջեւ, և յողթութիւնը այս վերջիններուն չմնաց:

Սօնասթըրի նահանգին մէջ կացութիւնը նոյնն է: Հոն ալ բանտերը քաղաքական բանտարկեալներով լեցուն են, որոց մէկ մասը—աւելի ճիշդը քանի մը հարիւրը—կը սպասեն ամիսներէ ի վեր իրենց յանցանքը ճանչնալու, մինչդեռ լեռներու մէջ ապստամբական խումբերը կը բազմանան և կ'անոնաւոր կամ անկանոն զինուորները սովի կենթարկեն գիւղերը ուր իրենք տեղաւորուած են պահպանողի պաշտօնով:

Երբ ընդհարում մը կը պատահի ապստամբներու խումբի մը և թըրքական ուժերու միջեւ, դատի կը սկսին, ինչպէս թիրզիէ գիւղին մէջ, ուր, այդ կերպ կուրի մը հետեւանօք, բոլոր մարդիկը 18 էն մինչեւ 60 տարեկան ձերբակալուեցան, ձերբ, կիներ և տղաք թշուառութեան ենթարկուեցան հակառակ իրենց բողբոջներուն:

Կառավարութեան պաշտպանութեան տակ իսլամ գիւղացիները յաճախ էն գարշելի չարագործութիւնները կ'ընեն, ինչպէս Օսոի գիւղին մէջ, որուն չորս անկիւններէ վերջերս կրակ տուաւ պահապան Սալի Աղան, վրէժ լուծելու համար իրեն անիրաւ պահանջներուն մերժուելուն առթիւ:

Գոսովաի վիլայէթը խիստ խառնաշփոթ է ոստիկանապետ Տերվիշէֆէնտիին սպանութեամբ, Սթիւպի մէջ, պաշտօնական ոստիկանի մը կողմէ, Հակառակ այս չարագործին կոյսուելուն, այս նահանգը միւսներուն նման կը տառապի լուծի մը տակ այնչափ աւելի անտանելի որ նոյնիսկ անոր ազատութեան համար ելած ջանքերը աւելի կը ծանրացնեն ճնշումը և կ'աճեցնեն ընդհանուր խառնակութիւնը:

Պաշտօնականներուն և զինուորներուն մէջ, որք կը բանտարկեն, կը գրաւեն, կը տանին և աւաղակեն: Բոլոր մէջ, որոնք, իրենց բնահոգը չնշար խնդրոյ մը ծառայելու գոյնին տակ, կանպատուեն, կը չարչրկեն անխտրաբար թշնամիները ու բարեկամները, ժողովուրդը չը գիտեր իր գլուխը որ կողմ դարձնէ:

Սալ է թէ Մակեդոնիան իրեն նպատակ ունենայ դրացի այս կամ այն երկիրը ընդարձակելու, ի վրաս այն նախանձուրդներուն որոնց նախանձը չը վարանիր նախամեծար համարել երջարածգումը սրաքոչքոյին, այսինքն աւերումը և մահը այս երկրին, քան լուծում մը որ հակառակ ըլլայ իրենց եսասէր ձգտումներուն: Ամէն պարագայի մէջ Եւրոպայէ կախում ունի և միայն սա է որ վերջ մը պիտի տայ պոլիարո—մակեդոնական դարձումներուն, եթէ կան: Այն է Պեռլինի դաշնագիրը գործնական հողի վրայ դնել, և պահանջել կատարումը այն յանձնառութեանց որոնք ըմբռնուած են ստորագրողներէն:

Սօֆիայի Մակեդոնական երրորդ համաժողովը քուէարկեց բարենորոգմանց ծրագիր մը, որուն տասներկու յօդուածները կատարելապէս համաձայն են Պեռլինի դաշնագրին յօդուածներուն կամ 1876ին Կ. Պոլսոյ դեսպանաժողովոյն ատենագրութեանց (բոթօբօլ) որ պիտի կրնար արիւնհեղ պատերազմի մը առաջն առնել առանց Տիգրայէլի, Պիդմարքի և Կորչաքովի և որ այնչափ յստակատեսութեամբ որոշեց խաղաղութեան և Արեւելքի յառաջադիւ

մութեան պայմանները: Սններելի պիտի ըլլայ ու է պատրուակներ առաջ բերել խափանելու Մակեդոնիոյ նոյնպէս և Հայաստանի համար վերսկսումը գործի մը որ միայն կրնայ ապահովել, փոքրիկ զոհողութեամբ մը, բրիտանոնեայ ժողովուրդներուն տարրական անգործութիւնը առանց օսմանեան կայսրութեան ամբողջութեանը դպչելու: Այս կերպ առիթներ չեն ներկայանար դիւրութեամբ երբ թողուի որ ձեռք բնեն: Բեդրապուրկի և վիեննայի դահլիճներուն ձեռնարկը կոչ մը կը ձեւացնէ ամբողջ Եւրոպայի:

Խմբագրական «ԹԱՆ»

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՉ, 23 Յուլիս

Տիգրաւնակերտ — (Գործակալութեանս յատուկ թղթակցէն). — «Մեր քաղաքը տագնապի մէջ է, որովհետեւ ահագին վտանգ մը կըսպառնայ անոր: Ղարաղօչի աղան պատերազմի ելաւ Աղայի Զօրի վրայ եւ թալանեց անոր բոլոր գիւղերը: Կուր և կոտորած:»

Այս էր միւր ներկայացուցչին զրկած առաջին հեռագիրը Տիգրաւնակերտի (Տիարպէթի) մէջ գրտնող հիպատոսի մը ձեռք: Մենք այդ հեռագրին շատ կարեւորութիւն չը տուինք, նախ որովհետեւ անհասկանալի էր և երկրորդ որովհետեւ այս տեսակ հեռագիրներ որոնք շատ անգամ մեզի կը հասնին քիչ մը չափազանցուած կը լինին, ընդհանրապէս: Բայց հեռագրէն քանի մը օր վերջը—երէկ չէ առջը օր—նամակ մըն ալ առինք դարձեալ միւսնոյն աղբիւրէն, մեր թղթակցէն գրուած և զրկուած միւսնոյն հիպատոսաւ: Բանի միջոցով, որը աւելի տեղեկութիւններ կը պարունակէ և կը բացատրէ հեռագրին պարունակութիւնը: Ահաւասիկ:

Ղարաղօչ կամ Գարաղէօլ փոքրիկ քաղաք մըն է գոյմազամանիստ, և որ կը գտնուի Տիգրաւնակերտի և Սէփէրէկի մէջտեղը, այս տեղի աղան—զարմանալու չէ

այդ աղա բառին վրայ, որովհետեւ գիտնալու է թէ Տիգրանակերտի բոլոր նահանգը բաժնուած է աղաներու միջեւ։ Ղեռ 30-35 տարի առաջ Տիգրանակերտ քաղաքին աղան էր Նազրոյի պէկը որն այսօր նորէն քաղաքիս հիւսիս-արեւելեան կողմը ահագին անկախ իշխանութիւն մը ունի։ Մեր նահանգին մէջ ամէն գիւղ և ամէն քաղաք իւր աղան կամ պէկը ունի—որ Սուլթանէն փաշայի տիտղոսն ստացեր է, համարձեցնելու հրամանատար է և կը կոչուի Աղայի Ղարաղոյ։ Գալով Աղայի Զօրին, սա ալ Զօրի աղան է։ Զօրը փոքրիկ քաղաք մըն է կամ խոշոր գիւղ մը 5-600 տունէ բաղկացած և կիսնայ գէպի Մէրտինի կողմերը։ Մինչեւ հիմայ անյայտ մնացած պատճառով մը Ղարաղոյի աղան գլուխը հաւաքելով քանի մը հազար հօգի, կը յարձակի Զօրի աղային վրայ, անոր բոլոր գեղերը մէկ երկու օրուան մէջ ոչնչացուց։ Զօրի աղան բնականաբար դիմադրեց և սարսափելի կռիւներու մէջ քանի մը հարիւր մարդիկ մեռած են երկու կողմէն ալ։ Զոհուած գիւղերու մէջ կը գտնուին Հայու, Ասորիի, Քիւրտի և Թիւրքի գիւղեր։ Զօրի աղան բոլորովին յաղթուած է, իսկ Ղարաղոյի աղան իր յաղթութենէն հպարտացած աչքը դրեր է Տիարպէթի վրայ։ Իր խորհրդազանձ ամբոխով հասած է քաղաքիս (Տիգրանակերտ) շուրջը, մէկ ժամ հեռաւորութեան վրայ, և ասոր համար մենք տագնապի մէջ ենք։ Քաղաքիս վալի-փաշան չբախմբով մը գնաց Ղարաղոյ աղայի հետ բանակցելու։ Բանակցութիւնը ղեռ կը շարունակուի։ Քաղաքիս բոլոր բնակիչները Հայ, Թուրք, Ասորի, Ղըպտի, Արաբ և ուրիշներ՝ սարսափի մէջ են, որովհետեւ կը վախցուի որ ամբողջ քաղաքը թալանի երթայ, առանց խտրութեան։

Էսք-Ռեսք

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (30)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՐ ԵՒ ԱՂԱՅԻ

Այս խորհրդածութիւններն, որոնք վայրկեանական ասուպներու պէս մանկամարդ ու անբիծ աղջկան հոգիէն կանցնէին՝ ճառագայթելով անոր բովանդակ էութիւնը, այնքան անուշ ու այնքան յուսալից էին որ չեն բացատրուիր։

Լուսիս իր քաղցր երեւակայութեան մէջ ընկղմած էր, երբ երկու հօգի իր դէմն ելան։

— Ո՞վ ես դուն, հարցուց անծա-

ՀՐԱԽԵՐ

ՊՈԽԼԿԱՐԻՈՅ ՀԱՅ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐ
ԲՈՒՆ ԵՒ ՌԵՍՈՒՅՈՒՆԵՐՈՒՆ

Աղին պաշտօնակիցներ, Սերունդներ պատրաստել, ահա ամէն ուսուցչի նուիրական և բարձր պաշտօնը, և մանաւանդ հայ ուսուցչի, որ ազգին ներկայ ահեղ ճգնաժամին մէջ պէտք է գիտնայ իր պատրաստելիք սերունդը օժտել արտակարգ բարոյական ոյժով և մտաւոր հիմնական կարողութիւններով։

Հայ ուսուցչութիւնը մինչեւ հիմայ իր վրայ դրուած յոյսերը արդարացուցած է կամ կրնայ արդարացնել։ Բնականաբար օչ, ի՞նչ պէս կրնայ բարոյական ոյժ ու կորով ներշնչել իր հասուցած սերունդին, երբ ինք զրկուած է անկէ, մասամբ իր անհոգութեամբ և մասամբ ալ ժողովրդին տգիտութեամբ։ Ի՞նչպէս կրնայ լուրջ և յառաջդիմութեան հակամէտ մտաւորական կարողութիւններով զարդարել իր սանին միտքը. երբ ամէն ազգի մէջ, ամէն նախակրթ. թարաններու համար անհրաժեշտ եղող ամենատարրական պէտքերուն իսկ գոհացում չէ տրուած—այն է ծրագրիներու և դասաւանդութեան մէթոտներու միօրինակութիւն։

Պէտք է համբերել որ հայ վարժարաններու այս խառնակ վիճակը շարունակէ. չը փութանք այլևս հայ ուսուցչին, մեր պաշտօնին իրեն գիտակից անձինք միանալ, կազմակերպուիլ և գործել ազգին կրթական շահերը պաշտպանելու որոշ մտադրութեամբ։ Մեր դրացի պուկար ազգին ոգեւորիչ օրինակներէն չենք կրնար օգտուիլ։ Անոնք ունենալով կառավարութիւն մը և կրթական որոշ օրէնքներ, դարձեալ աւելորդ չեն համարած ուսուցչական միութիւն մը կազմել—ի սկզբան տկար ոյժերով, ապա հետզհետէ ստուարացած— և ուսուցչութիւնը բուն իսկ իր կոչման արժանի մակարդակի մը հաս-

ցնել և անոր վարկն ու պատիւը անպառաճ կամայականութեանց դէմ պաշտպանել։ Ի՞նչու միեւնոյնը մենք չընենք, քանի որ կը զգանք թէ զմեզ, ուսուցչին հարկը—այսինքն ազգին ամենէն կարեւոր գործող ոյժը—պաշտպանող ոչ ոք կայ։ Ի՞նչու իրեն ճշմարիտ առաջնորդներ ժողովրդեան մենք իսկ մեր ձեռքով չիգանք ապացուցանել թէ մենք հաստատ գիտակցութիւնն ունինք մեր ստանձնած գործին։

Ուրեմն, ազնիւ հայ պաշտօնակիցներ, վառնայի Ազգ. վարժարաններու ուսուցչական մարմինս կուգայ խնդրել, յանուն հայ ազգի շահերուն, Պուկարիոյ բոլոր հայ ուսուցչներէն և ուսուցչուհիներէն որպէս զի չը վարանին այսպիսի վիճ. գործի մը նախաձեռնարկ ըլլալու։ Հայ մամուլը, բնականաբար շատ սիրով իր էջերը կողմէ այդ մասին յայտնուած գաղափարներն ու կարծիքները հիւրընկալելու և պիտի փութայ ի հարկին սոյն կարեւոր ձեռնարկը յառաջ մղելու։

Ուստի, առանց վերջնական բան մը ըսած ըլլալու յաւակնութեան և առանց մանրամասնութեանց մտնելու, որպէս զի մեր յարգոյ պաշտօնակիցները լոյսորովին անորոշ և տարտամ դրութեան մը չը մատնենք, կուգանք «Միութեան» իբրեւ հիմ չորս կարեւոր կէտեր իրենց ուղադրութեան յանձնել։

1. Բոլոր պուկարահայ վարժարաններու ծրագրիներու միօրինակութիւն։ (*)

(*) Վառնայի ուսուցչական խումբին առաջադրած սա չորս կէտերէ առաջինը՝ որ կարեւորագոյնն է, արդէն բազմիցս այս սինակներու մէջ յիշեցուած ու անոր անհրաժեշտութիւնը բացատրուած է։ Բայց այդ ամէնը միայն զլխու շարժումով հաւանութիւն ստացած էին ցարդ ու երբեք գործնական քայլի մը չէին յանդած։ Ուրախ ենք որ այս անգամ նախաձեռնութիւնը ուսուցչներուն, այսօրինքն բուն իսկ գործին մարդոցը կողմէ կըլայ. ուստի սիրելի է յուսալ

2. Պաշտօնի կոչուող ուսուցչին ներու կողմէ վարժարանի մէջ իրենց անհրաժեշտ բարոյական հեղինակութիւնը վայելելու մասին որոշ պահանջումներ։

3. Ուսուցչական իրաւունքներու և շահերու պաշտպանութիւն։

4. Ուսուցչական արժանապատուութեան բարձրացում հասարակութեան առջեւ։

Յուսով ենք որ դուք եւս, այնքան նախանձախիդի սոյն գործին որքան մենք, պիտի փութաք այս առթիւ ձեր կարծիքներն ու գիտողութիւնները մեզ հաղորդել։

Կը խոստանանք, երբ ստանանք ուսուցչին ներու պատասխանները, անոնց ամփոփումը հրատարակել մամուլի մէջ և պատճէնը ուղարկել ձեզ. և յետոյ պատգամաւորական ժողովի մը գումարման թուականը և տեղը Պուկարիոյ ուսուցչաց հաւանութեան հիմարկել։

Նկատի ունենալով ժամանակի սղութիւնը, կը յուսանք որ առաւելն մինչեւ Յուլիսի վերջ պիտի բարեհաճիք պատասխանել ներկայ հրաւերին։

Ընդունեցէք, ազնիւ պաշտօնակիցներ, մեր անկեղծ յարգանքները։

Ուսուցչական Մարմին

Ազգ. Երկ. Վարժարանաց Վառնայի (ԿԵԻԿ)

Վառնա, 14 Յուլիս 1902

Յ. Գ. — Այն պաշտօնակիցները որոնց հասցէն մեզ անձանօթ ըլլալով մասնաւոր կոչ չեն ընդունած, կը խնդրենք որ ներկայս իբր այն նկատեն։

Նոյն

մեզ թէ գործնական արդիւնքի մը յանգի։ Եւ որպէս զի այս օգտակար հրաւերը առաջին օրէն իր կարեւորութիւնը չը կորսնցնէ, կուգանք յայտարարել թէ Վառնայի ուսուցչական խումբին մէջ այլեւս պէտք չէ հասկնալ Լուսի Սարգիսեանը, որ ինչպէս Հայ. Յեղ. Դաշնակցութենէն նոյնպէս եւ ուսուցչութենէն զուրս առնուած է։

Ե. Խ.

պէս գրկին մէջ առաւ Լուսիան ու, — Խեղճ աղջիկս, խեղճ աղջիկս, մըմնջեց։

Հայրը ու աղջիկը իրարու գրկաց մէջ թափեցին դանուութեան արցունքները։

ՎԱՆԱԿԱՆ...

Չորս ոստիկանները Վարազայ լեռնաձորէն ուղղակի քաղաքը հասան ու ոստիկանութեան տեսչին առջեւ հանեցին թշուառ Վանականը։

Տեսուչը՝ քառասունն անցած, արեւնոտ այտերով, խոսք ինկած աչքերով, տոգոյն ու ճաղատ ճակատով, միջահասակ ու նիհարակազմ մարդ մըն էր եւ կը կոչուէր Շիւքրի պէյ։

Շիւքրի պէյ պաշտօնատան սենեկին մէջ նստած էր, կանանչ չուխայով

նոթներէն մին՝ թուրք բառերով։

— Հայ եմ... պատասխանեց Լուսիան՝ հայերէն լեզուով։

— Հայ... քաղաքանչեցին երկու անձանոթները՝ որոնք այս անգամ հայերէն լեզուով խօսեցան։

— Այո՛, հայ եմ։

— Բայց ի՞նչ գործ ունիս այստեղ։

— Ես ալ չեմ գիտեր... բաղդը բերած է։

— Մի՞նա՞կ ես։

— Ո՛ր...։

— Ուրիշ ո՞վ կայ։

— Մարդ մը կայ։

— Ո՛ր է։

— Դիւղը գնաց։

— Ի՞նչ է իր անունը։

— Չեմ կրնար տալ... պէտք է որ դուք նախ ձեր ո՞վ ըլլալը յայտնէք ինձի, որպէս զի վստահօրէն ձեր վրայ։

— Ի՞նչ ըսել է... մենք մարդիկ ենք։

— Դուք մարդիկ էք, գիտեմ,

բայց ինչպէ՞ս կըլլայ որ այստեղ կը գտնուիք։

Այս հարցումը ղեռ չէր աւարտած, ահա տասը հոգի ալ մօտեցան։ Այդ եւկողներուն հետ կը գտնուէր պարթեւ հասակով մարդ մը։

— Ո՞վ է ան, հարցուց պարթեւ հասակով մարդը։

— Մանկամարդ հայ աղջիկ մըն է, պատասխանեցին երկու մարդեր, որոնք կըստիպէին որ Լուսիս յայտնէր իրեն ընկերացող անձին անունը։

— Մանկամարդ հայ աղջիկ... բացառանչեց պարթեւ հասակով մարդը սարսափով։ Ի՞նչ է անունը։

— Լուսիս... մըմնջեց թշուառ աղջիկը։

— Լուսիս, գոչեց պարթեւ հասակով մարդը։ Քեռ ընկերդ Վանականն էր։

— Այո՛։

Պարթեւ հասակով մարդը, որ մեր ծանօթ աւաղակապետն էր, անմիջա-

ՎԱՍՈՆԱՅԻ ՈՐԲԱՆԱՄԸ

Մէկ երկու տնէստներ՝ որոնք սանթիմ մը իսկ չեն վճարած վառ-նայի երկսեռ Որբանամի, սկսած են սրճարաններու և գինետունե-րու անկիւնները իմ Որբանամի գանձապետ լինելուս մասին ան-տեղի խօսքեր ըսել. որպէս զի այդ կարգի դատարկապորտերու խօսակ-ցութեանց և գրութեանց նիւթ չը լինիմ, այս օրուրնէ սկսեալ կը հրաժարիմ վառնայի երկսեռ Որ-բանամին Գանձապետութեան պաշտօնէս, և կը խնդրեմ յարգոյ բաժանորդներէն, որ իրենց հա-մար նոր գանձապետ մը ընտրեն, որպէս զի սկսած լարի գործը շարունակուի և ստանձնուած 16 որբերը անպաշտպան չը մնան:

Խ. Ազնաւորեան

Վառնա, 15 Յուլիս 1902

Դիւս. Խմբ. — Որբանամի Տ. Գան-ձապետը աւելի նպատակաւորաբար վառ-նաւ կը լրջայ եթէ, գործէ քաշուելէ տուալ, Ընդհանուր Ժողովը գումարել տայ, որ, հակառակ կանոնադրու-թեան որոշ մէկ յօդուածին արամա-դրութեանը, յետաձգուած է քանի մը ամիսներէ ի վեր:

ՀԱՅԱՍՏԷՐ ՈՒ ԱՆՁՆՈՒՆԵՐ ՖԻՐՄԱՍԻՆԻՆ

Տիկին Մեյրիկե և Հայերը. — Ֆրան-սական Ակադեմիան իր վերջին նստին մէջ Օտիֆրէտ անուն միջանակը—որը հաստատուած է անձնութիւններ վարձատրելու—յատկացուց Տիկին Մեյ-րիկեի որ Ազգայնականութիւն (Էտերնէ) այսօրուան ֆրանսական հիւպատոսին կիինն է:

Հայկական դժբաղդութիւններու ժա-մանակ, կոտորածներու ամենատաք միջոցին Պ. Մէյրիկե (իր կիինով և զաւակ-ներով միասին) Տիգրանակերտ (Տիգր-պէթի) կը գտնուէր ֆրանսական դեր-հիւպատոսի պաշտօնով. եթէ հարկը հայեր ապաստանեցան դեր-հիւպատո-սարանին մէջ ֆրանսական գրօշին տակ. գարնան մէջ բազմաթիւ հայեր ուղեցին գաղթել և երթալ մինչեւ Գիւլիկեան Աղեքսանդրիա (Ալեք-սանտրէթ) անկէ նստով մեկնելու...

- Ծածկուած ուղանի մը քով:
- Վանական անվեհեր կերպարանքով մը այդ դարձատիպ թուրքին առջեւ կեցաւ, որ չափազանց կատէր հայու-թիւնը:
- Ի՞նչ է անունդ, հարցուց Շիւք-րի պէյ նեղացած ու գրեթէ արհամար-հական ձայնով մը:
- Անունս Խաչիկ է, պատասխա-նեց Վանական՝ առանց «Պէյ Էֆէնտի» անվանը տալու անոր:
- Մականունդ, պատասխանեց Շիւք-րի պէյ չկրնալով ծածկել իր բարկու-թիւնը:
- Մէյրիկեն է:
- Ո՞ր ծնած ես:
- Թիմարայ գեղերու մէջ:
- Բանի՞ տարեկան ես:
- Քսանութը տարու:
- Ի՞նչ գործով կը զբաղուի:
- Ես երկաթագործութիւն կընեմ:
- Ինչպէ՞ս երկաթագործութիւն...
- Ըսել կուզեմ թէ գեղացիներու

Անչն կողմ սարսափ կը տիրէր որով-հետեւ թէպէտ պաշտօնական կոտո-րածը առժամայէս դադարած էր, բայց անպաշտօն ֆարգերը դեռ կը շարու-նակուէին ամէն կողմ. թիւք և քիւրա-ն՝ որ հայու մը հանդիպէին զայն սպաննելը բարի գործ մը կը համա-րէին քանի որ Ալլահի ստուերին, հաւատացեալներու հրամանատարին կամքը այն կը պահանջէ... Ուրեմն անգիրն վտանգի կենթարկուէին Հա-յերը Տիգրանակերտէն մինակ մեկնե-լով, Պ. Մէյրիկե առաջարկեց ինքն անձամբ առաջնորդել Հայերուն մին-չեւ Ալեքսանտրէթ. բայց քաղաքին մէջ մնացող միւս Հայերը վտանգի մէջ էին, որովհետեւ նոր ֆարգերու լու-րեր կը տարածուէին, ուստի գաղ-թողները չուղեցին ընդունել զեր-հիւպատոսի առաջարկը:

Տիկին Մէյրիկե ինքզինքն առաջար-կեց իրը առաջնորդ և պաշտպան գաղ-թող Հայերուն, որոնք ուրախու-թեամբ և խորին երախտագիտու-թեամբ ընդունեցին Տիկինը պաշտպա-նութեան տակ մտնել: Մեկնելու օրը թուրք կառավարիչն ուղեց անձնա-պահ զօրքեր տալ Տիկինը, բայց սա պատասխանեց թէ զօրքերը պաշտպա-նելու են Հայերն ալ, հակառակ պա-րագային ինքը մինակ պէտք չունի զօրքի, փաշան այս պատասխանին շատ չը հաւանցաւ. բայց ստիպուած եղաւ պահանջող ուղեկիցները դարձ-եալ տալ: Մօտ քսան օր հարկաւոր էր գաղթող Հայերուն Տիգրանակերտէն Ալեքսանտրէթ հասնելու համար: Ճա-նապարհին բաւական արկածներ պա-տահեցան որոյ մէջ Տիկին Մէյրիկե իր քաջասրտութիւնը և անձնութիւնը կիմակային թէ Ֆրանսայի դեր-հիւպա-սին կիներ գաղթող Հայ խմբին հետ է, չէին համարձակեր յարձակուիմ գոր-ծել և հայերուն դպչել: Վերջապէս կարաւանը կը հասնի Պիլէճիք ուսկից անցնելու էր երրորդ գետը, պէտք էր տեղւոյն կառավարչէն թոյլտուութիւն խնդրել: Տիկին Մէյրիկե իւր ոտքը բերել տուաւ թիւքը կառավարիչը և հետեւեալ կերպով խօսեցաւ անոր հետ:

— Պէտք է այս երեք հարիւր հայերը Ալեքսանտրէթ առաջնորդեմ, հրաման կողմ անոնց հետ ջրէն անցնելու:

— Ինչ ըսին, կըսէ թուրքը, թէ դու ֆրանսական դեր-հիւպատոսին կիինն ես, ես քու ծառադ եմ: Բայց ո՞վ կրնայ զիս ապահովել թէ այս հայերը չեն երթար Պիլէճիքը թալլե-լու:

- խոփերը, արօրները, սալերու անիւ-ները, վերջապէս անոնց գործիքները կը շինեմ: Այս է իմ արհեստս:
- Հըրմ... Ժամաց Շիւք-րի պէյ իր կուստ գլուխը շարժելով. կը ստես, թշուառական, կը ստես, հասկցա՞ր: Եթէ երկաթագործութիւն կընէիր, ո՞ր թողուցիր քու գործիքներդ... ո՞ր է խանութդ:
- Ես խանութ մը չունիմ: Ամեն ատեն գիղերու մէջ կը պտտիմ, ուր եթէ շինուելու գործեր գտնեմ, կառ-նեմ գանսը իմ գիւղս կը տանիմ:
- Ո՞ր է գիւղդ:
- Թիմարայ ամենէ՛ն աննշան գիւղն է:
- Անուն չունի:
- Ունի: Բայց շատերուն անձանթ է: Նորէն կը կոչուի:
- Աղէ՛կ: Ընտանիք ունի՞ր:
- Ո՛չ. մէկը չունիմ:
- Երկաթագործութիւն ո՞ր սով-րած ես:

— Ի՞նչպէս կարող եմ այդ բանը ը-նել քանի որ զէնք չունիմ և թուով քու մարդիկներէդ քիչ եմ:

— Այո՛, բայց ի՞նչ պիտի լուէ իմ տէրս, Ալլահի մարգարէն, եթէ թու-ղում որ հայերն անցնին: Ես քու տը-րամադրութեանդ տակ եմ, թո՛ղ հա-յերը և Է՛կ քեզ անցնեմ քու զաւակ-ներով:

— Լաւ կըսէ Տիկին Մէյրիկե—նոր գաղափար մը յղանալով—նախ տա՛ր ջրի միւս եղերքը իմ չորս երախանե-րս, մինչեւ ևս հայերուն բանակ-ցիմ: Թուրք կառավարիչն երբ վե-րադարձաւ, երեք հարիւր հայերն իւր ձեռքին մէջ ունենալու յոյսէն ուրախ, Տիկինն բաւ անոր ապահական ձե-ւով:

— Լսէ՛, երդում ըրած եմ այս հա-յերը կամ աղատել և կամ անոնց հետ մեռնել, եւ ահա ի՛նչ որոշեցի, ամե-նէն վերջը ես պիտի անցնեմ ջրէն, բոլոր իմ պաշտպաններս պէտք է ջրէն անցնին և կամ ես անոնց հետ այստեղ պիտի մնամ (° ° °): Բայց գիտ-ցած եղիր որ եթէ ջրի միւս կողմը իմ զաւակներուս գաղաղութիւն մը պատահի դուս պիտի լինիս պատաս-խանատու: Վո՛ւ ես Ֆրանսայի դեր-հիւպատոսի կիինն եմ և Ֆրանսան գի-տէ թէ ինչպէս պէտք է յարգել տալ զինքը ներկայացնողները: Ուրեմն ինչ-պէս կուզես այնպէս վարուէ: Կառու-վարիչը՝ այս առնական խօսքերէն սիր-աւ փրթած, բոլոր կարաւանը ջրէն անցուց: Քանի մը օր յետոյ Տիկին Մէյրիկե կը վերադառնար Տիգրանա-կերտ, ուրիշ հայերու առաջնորդելու: Ահա այս հերոսական կնոջ յատկացուց ֆրանսական ակադեմիան անձնագրու-թեան մրցանակը:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ
Բարիդ, 19 Յուլիս

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Արմաշի դպրիվանքի վերադա-սույ Տ. Էդիշէ Եպս. Գուրեան տե-ղեկագրով մը իմացուցած է Պատ-րիարքարանի, թէ յիշեալ վանքի Որբանոցին մէջ պատասպարուող 22 որբերէն մէկը մեռած է, 10ր անձ-նական տկարութեան պատճառաւ հեռացուած և 5ը անյարմար է կատ-ուած են. ուստի միայն 6 որբեր մնացած են հօն:

— Պուրբէշէն ստացուած 2-3 նամակներէ ցաւ ի սիրտ կիմանաք թէ տեղւոյն Տէր Յարութիւն քա-

- Կարինի մէջ:
- Որչա՞փ ատեն է անկից մէկիւրդ:
- Տասը տարի մը չափ կը լրայ:
- Շիւք-րի պէյ լսեց: Կանանջ սեղա-նին վրայ դրուած ծրար մը բացաւ ու անկից թերթ մը թուղթ առնելով սկսաւ բոլոր հարցումները նշանակել մանրամասնաբար: Յետոյ եղեկ գրիչը մէկ կողմը դրաւ, ձեռքը ճակտին տա-րաւ անարգ շարժումով մը և շարու-նակեց հարցաքննութիւնը:
- Մինչեւ հիմակ բաժնեկի շինու-էին, ըսաւ Շիւք-րի պէյ: Ես աղէկ գիտեմ որ դուն երկաթագործ մը չես, դուն թիմարայ գեղացիներէն ալ չես, որովհետեւ այդ անքան անասուններուն ճես նմանիւր: Պէտք է որ ճշմարտու-թիւնը խօսիս, եթէ ոչ խօսել տալու միջոցները չեն պակտի ինծի: Արդ-եօք կըցի՞ հասկցնել:
- Կը հասկնամ... պատասխանեց Վանական՝ առանց խռովելու: Եթէ յանցաւոր եմ ու դուք աղէկ գիտեք:

հանան գձուձ արհեստի մը ձեռք զարկած է ժամանակէ մը ի վեր, այսինքն նոստիաներ կը գրէ, պիշիշ կը կապէ կը քակէ և պա-գըձիւթիւն կընէ, Եւ նոյնպէս ցա-ւալի է թէ տեղւոյն հայ ժողո-վուրդին մէջ կը գոնուին դեռ կարգ մը միամիտներ որոնք այդ կարգի խաբէական բաներու հա-ւատք կընծային:

Մենք այս առթիւ պարտախա-նութիւն կը սեպենք զգոյշացնել յիշեալ քահանան, և կը յիշեցնենք իրեն Թէ այդ գձուձ արհեստը իր քահանայական բարձր ու սրբազ-նագոյն կոչումին բոլորովին հակա-ռակ է և զինք բարոյական ծանր պատասխանատուութեան կենթար-է. իր պաշտօնն է ժողովուրդը նախապաշարութեան հեռացնել, ոչ թէ աւելի ունայնամիտ ու աւե-լ՝ բրդապաշտ ընել:

— Մեզ հասած մահազդէ մը ցաւօք կիմանաք թէ վիէննայի Միթիարեան միաբանութեան արքայալ. Տ. Արսէն Արքեպիսկոպոս Սյորնեան իր մահականացուն կնքած է 78 ամեայ հասակին մէջ:

Յուդարկաւորութիւնը բաւական չքով կատարուած է: Այս առթիւ Աւստրո-Հունգարիոյ կայսրը ցա-ւակցական հեռագիր մը ուղղած է Միաբանութեան:

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆ

Ասկէ առաջ մեր մէկ քանի թի-ւերով ծանուցած ենք թէ՛ դադա-րի պատճառաւ քանի մը թիւ պա-կաւ հրատարակելուս փոխարէն «Միմունջ Հայկական» երգարանը կամ «Հայրենիքի գոհար» գիրքը՝ որն որ ընտրեն, կէս ֆրանկի փո-խարէն պիտի զրկենք մեր բաժա-նորդներուն:

Բայց ոմանք այդ կէս ֆրանկը չսեղ ու իրենց բաժնեգրին պարտ-քը չյիշել ձեւացնելով քարտ մը կը գրեն մեզ որ ծանուցուած գիրքե-րէն մին չընենք:

Այսպիսիներուն անգամ մըն ալ կը յիշեցնենք թէ՛ որոնք որ իրենց բաժնեգրին վրայ կէս ֆրանկ ալ աւելցնելով մեզ զրկեն, անոնք մի-այն կը պատանաւ այդ գիրքերէն մին: Իսկ ներկայ տարւոյ բաժնե-գրները ամբողջ վճարողներուն պատ-րաստ ենք զրկել եթէ կէս ֆրան-գի նամակագրոյ մեզ զրկեն:

ալ ի՞նչ հարկէ խօսելու: Չեր ձեռքն է իմ կեանքը: Արդարութիւնը ի՞նչ է՝ թո՛ղ գործադրուի:

— Փաստաբանութիւն չեմ ուղեր, թշուառական, ընդհատեց Շիւք-րի պէյ՝ նստած տեղէն ոտքի կիկելով: Դուն կը ծաղրես զիս, անանկ չէ՞:

Ու բարկութեամբ Վանականին մօ-տենալով ծանր ապտակ մը իջեցուց անոր երեսին:

Վանական սարսափ... ու հարուա-ծին ցաւէն՝ արցունքները լիցեցեցան իր գեղեցիկ ու տրամալի աչքերուն մէջ: Բայց ջանաց ինքզինքը զսպել ու իր անվեհեր կերպարանքը չնուստ-ցնել մաքրկային գէժքով այդ շունին առջեւ:

(Շարունակելի)

